

## Կիպրահայ

### ՆԱՐԵԿԻ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐ ԿՐ ՄԵԿՆԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Տարիներու իմաստալից ասանդութեամբ, Կիրակի, 13 Յուլիս 2014-ին, Նարեկ վարժարաններու 14 շրջանաւարտներ, ընկերակցութեամբ երկու ուսուցիչներու, այս տարի եւս մեկնեցան հայրենիք, մասնակցելու համար «Արի Տուն» ծրագրին, որ նպատակ ունի սփիւռքահայ պարման-պարմանուհիներուն ծանօթացնել հայրենիքը, անոր պատմական, տեսարժան վայրերը, անոնց ներշնչել հայրենաճանաչման եւ հայրենասիրութեան ոգի...: Անոնք Հայաստանի մէջ պիտի անցընեն երկու լման շաբաթ, առաջին 9 օրերը հիւրընկալուելով հայրենական հիւրընկալ ընտանիքներու յարկին տակ, մնացեալ օրերը՝ Ծաղկաձորի մէջ, մասնակցելով «Արի Տուն» ծրագրի ձեռնարկներուն եւ գործունէութեանց:



Նշենք որ այս շրջապտոյտին բոլոր ծախսերը, ներառեալ երկու ընկերակցող ուսուցիչներու ամբողջական ծախսը, կը հոգայ ամէն տարի Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան: Շրջանաւարտներուն հայրենիք կեցութեան ծախքը կը հոգայ Սփիւռքի նախարարութիւնը:

«ԱԶՍՏ ԽՕՍՔ»ը բարի ճանապարհ եւ բարի կեցութիւն կը մաղթէ մեր շրջանաւարտներուն:

Երկու ընկերակցող ուսուցիչներու ամբողջական ծախսը, կը հոգայ ամէն տարի Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեան: Շրջանաւարտներուն հայրենիք կեցութեան ծախքը կը հոգայ Սփիւռքի նախարարութիւնը:

«ԱԶՍՏ ԽՕՍՔ»ը բարի ճանապարհ եւ բարի կեցութիւն կը մաղթէ մեր շրջանաւարտներուն:

## Խմբագրական

### ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԼՈՉԱՆԻ ԴԱՇՆԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԲ

Հայոց Յեղասպանութեան 100-ամեայ տարելիցին դէմ յանդիման, ազգային մեր Պահանջատիրութիւնն ու Դատը ճիշդ եզրոյթներով սահմանելու տեսակետէն, կը խորհիմ որ կարելոր է անդրադառնալ Լոզանի Դաշնագրին, անոր հերթական տարեդարձին առթիւ, ինչպէս նաեւ՝ անոր հետ սերտօրէն առնչուող, Սեւրի դաշնագրին, վերջինէն բխող

Ուիլսընեան Իրաւարար Վճիռին, աւելի լաւ ըմբռնել փորձելու, թէ ի՞նչն ինչո՞ց է, եւ ո՞ւր ենք մենք այսօր՝ մեր իրաւունքները իրաւականօրէն հետապնդելու գծով:



Ինչպէս յայտնի է, 1923 Յուլիս 24-ին, Զուիցերիոյ Լեման լիճի ափերուն վրայ գտնուող քաղաքին մէջ կնքուեցաւ Լոզանի Դաշնագիրը, որ ծանօթ է որպէս «Լոզանի խաղաղութեան դաշինքը», Սեւրի Դաշնագրէն շուրջ երեք տարի ետք: Այդ երեք տարիներուն, յաղթական Դաշնակիցները՝ ոյժի տիրապետութեան եւ ցուցադրութեան իրենց մոլեգին պայքարին մէջ, պիտի բաժնուէին իրարու մէջ, իրենց միասնութիւնը պատրանք դարձնելով, միւս կողմէ ալ՝ անոնք պիտի սիրաբանէին Թուրքիոյ հետ, որ պիտի ըլլար գլխաւոր շահողն ու օգտուողը ստեղծուած կացութենէն...

Սեւրի դաշնագրով, 1920 Օգոստոս 10-ին ստորագրուած, յաղթական Դաշնակիցները պաշտօնապէս ստեղծեցին, ճանչցան ու թուրքին պարտադրեցին անկախ Հայաստանը, որուն սահմանները ճշդելու պարտականութիւնը ստանձնեց ԱՄՆ-ու նախագահ՝ Ուուսթրօ Ուիլսընը, որ իր իրաւարարութեան արդիւնքը կը յայտնէր 1920 Նոյեմբեր 22-ին, շեշտելով թէ հարցը քննէր էր «արդարութեան բարձրագոյն շահերու» մտածումով ու տրամադրելի «ամէնէն վստահելի» տեղեկութեանց լոյսին տակ: Ըստ Ուիլսընի սահմանագծումին, 42,000 քառակուսի քիլոմէթրի հասնող երկրամաս մը Թրքահայաստանէն կը միացուէր Հայաստանի Հանրապետութեան:

Սեւրէն Լոզանի քաղաքական անկայունութեան, ոյժի ձեռքբերման ահաւոր մրցակցութեան եւ բուռն պայքարի յեղեղուկ ժամանակաշրջան մը եղաւ, ուր ո՛չ Հայաստանը, ո՛չ Բրիտանիան եւ Դաշնակիցները, ո՛չ իսկ Ռուսիան կրցան իրենց ըղձանքները եւ նպատակակէտերը պատշաճեցնել իրենց միջոցներու կարելիութեանց, ինչպէս կ'ըսէ հմուտ պատմաբան Դոկտ. Ազապի Նասիպեան, իր «Բրիտանիա եւ Հայկական Հարցը 1915-1923» գիրքին մէջ, աւելցնելով որ միայն Քեմալ Աթաթիւրքը յաջողեցաւ ծայր աստիճան ճշգրտութեամբ կշռել իր երկրին ռազմագիտական անսահման զօրութիւնը եւ անսխալօրէն գիտնալ թէ իրական ի՞նչ ոյժ կրնար ձեռքբերել 1923-ին:

Այսպէս, Լոզանի մէջ, ըստ վերոնշեալ գիրքին, Իսմէթը գրեթէ որեւէ զիջում չըրաւ՝ Դաշնակիցներուն, ու մնաց բացարձակապէս անզիջող՝ Հայաստանի նկատմամբ: Լոզանի մէջ, Լորտ Գըրզընը անդրադարձաւ Հայերուն սերունդներէ ի վեր կրած «դաժան տառապանքներուն» եւ ազգային տուն մը թախանձեց անոնց համար: Ան նոյնիսկ Իսմէթին հարցուց շեշտակի կեպով, թէ ի՞նչպէս եղած էր որ Փոքր Ասիոյ նախապէս 3 միլիոն հայերը այժմ վերածուէր էին 130,000-ի: «Իրենք զիրե՞նք սպաններ էին, թէ կամովին հեռացեր էին»: Ինչո՞ւ հարիւր հազարաւոր Հայեր հիմա վտարանդի էին աշխարհի ամէն երկրի մէջ: Ինչո՞ւ համար այդ Հայկական Հարցը մէկն էր աշխարհի մեծ գայթակղութիւններէն: Անօգուտ էին այդ հարցումները: Գըրզընին ամբաստանութիւնը մնաց իբրեւ յայտարարութիւն մը միայն: Եւ այդպէս, Չըրչիլին խօսքերովը, Լոզանի Դաշնագիրին մէջ, «պատմութիւնը ի գուր պիտի փնտռէ «Հայաստան» բառը»:



Բայց ա՛յն արդեօ՞ք իսկապէս կը նշանակէ, որ «Սեւրի դաշնագիրը պատռեցին Լոզանի մէջ», ինչպէս կը գրեն մեր կարգ մը անուանի հրապարակագիրները...:

Փորձառու իրաւագէտ եւ «Մոտոս Վիվենտի» կեդրոնի ղեկավար Արա Պապեան՝ իր «Հայոց Պահանջատիրութեան Իրաւական Հիմունքները» գրքին մէջ, մոլորութիւն կը համարէ ա՛յն տեսակետը, թէ Լոզանի պայմանագիրը իբր չեղեալ է յայտարարել Սեւրի պայմանագիրը: Հիմնուելով ամուր փաստարկներու վրայ, Արա Պապեան կ'ընէ հետեւեալ եզրակացութիւնները. –

«1/ Սեւրի եւ Լոզանի պայմանագրերը իրաւական երկու տարբեր փաստաթղթեր են:

2/ Լոզանի պայմանագիրն իրաւասու չէր եւ չեղեալ չի յայտարարել Սեւրի պայմանագիրը:

3/ Լոզանի պայմանագիրը, հիմնական օրէնքի կարգավիճակով, ամրագրել է ոչ-մուսուլման փոքրամասնութիւնների իրաւունքները:

4/ Լոզանի պայմանագիրը վերահաստատել է Թուրքիայի հրաժարումը իրաւարար վճռով Հայաստանի Հանրապետութեանը փոխանցուած տարածքների տիտղոսից եւ իրաւունքից»:

Կը թուի թէ հայ քաղաքական-իրաւագիտական միտքը տակաւին շատ բան պէտք է պարզէ Լոզանի պայմանագրի բուն էութեան եւ անոր յօդուածներուն բովանդակութեան շուրջ: Վերջերս, թուրք այլախոհ պատմաբան Թաներ Աքչամ գիրք մը հրատարակած է՝ «Օրէնքներու ոգին: Հետեւիլ ցեղասպանութեան հետքին՝ «Լքեալ գոյքերու» մասին օրէնքին մէջ» խորագրեալ, որուն շուրջ կատարուած հարցազրոյցի մը ընթացքին (Ակունք-ի հետ), ան կ'անդրադառնայ Լոզանի պայմանագրին ըսելով. «Լոզանի համաձայն, Թուրքիան ընդունել է, որ իր բռնագրաւած լքեալ գոյքը յետ է վերադարձնելու տերերին, եթէ անոնք ողջ են, կամ՝ անոնց ժառանգներուն:.....Յատկապէս չափազանց կարելոր է 65-րդ յօդուածի 3-րդ պարբերութիւնը, ըստ որուն, 1915թ. Տեղահանութիւնն ու սպանութիւնները կը բնորոշուին որպէս «անօրինական կերպով ձեռնարկուած ռազմական միջոց», եւ կ'ըսուի, թէ այդ բռնագաղթի պատճառով մարդկանց կրած վնասները փոխհատուցուելու են.....: Ատիկա Լոզանի պայմանագրի դրոյթներէն մէկն է», աւելցնելով՝ «ըստ իս, փոխհատուցումը ոչ թէ անհատական, այլ հաւաքական խնդիր է»: Բանալի բառը այստեղ որոշապէս՝ «հաւաքական փոխհատուցում» հասկացութիւնն է: Իսկ հաւաքական փոխհատուցման պարունակը ՀՈՂՆ է:

Ցեղասպան Թուրքիոյ ժխտողականութեան հիմքերու հիմքը արդեօ՞ք սա չէ: Փոխհատուցման հիմնախնդիրը: Իսկ ասիկա իրաւականօրէն ամրագրուած կը թուի ըլլալ Լոզանի դաշնագրին մէջ եւս, հակառակ տիրող հանրային կարծիքին: Զուգահեռաբար, ըստ Արա Պապեանի, Ուիլսոնի իրաւարար վճիռը վերջնական է եւ պարտադիր է կատարման համար: Անիկա չունի ժամանակային սահմանափակում եւ անոր կարգավիճակը կախում չունի վճիռի յետագայ ճակատագրէն:

Հայ քաղաքական –իրաւական միտքը պիտի արթննա՞յ վերջ ի վերջոյ իր շուրջ հարիւրամեայ թմբիքէն, մասնաւորապէս Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի շեմին, եւ



Ցեղասպանութեան ճանաչումը մուրալու զգացական պղատնականութենէն ձերբազատ, հետամուտ ըլլալ՝ միջազգային իրաւունքով ամրագրուած մեր հողային եւ այլ իրաւունքները յստակացնելու իրաւական ճշգրիտ եզրոյթներով եւ զանոնք պահանջելու Միջազգային համապատասխան ատեաններուն մօտ...: Հայաստանը, մասնաւորապէս, որպէս պետութիւն եւ միջազգային օրէնքի Ենթակայ անդամ, պարտի գործել որպէս այդպիսին, Սփիւռքի տարագիր հայութեան հետ միատեղ, համադրելով եւ համակարգելով մեր միացեալ ոյժերն ու կարելիութիւնները: Այս ուղղութեամբ, որքան էական անհրաժեշտութիւն եւ իրաւաքաղաքական ու կազմակերպչական մարտահրաւեր է, որ Սփիւռքի Տարագիր հատուածը մեր ժողովուրդին, որպէս իրաւագրկուած եւ հայրենագրկուած Արեւմտահայութեան իրաւայաջորդը, կարենայ համախմբուիլ ու խտանալ մէկ Ներկայացուցչական Մարմնի մը ներքոյ, որպէսզի կարենայ միջազգային ատեաններուն առջեւ ներկայանալ որպէս Իրաւական Անձնաւորութիւն, այսինքն Տարագիր մեր ժողովուրդի հատուածը իրաւականօրէն ներկայացնող Մէկ, Կեդրոնական, Ներկայացուցչական Մարմին, համադրելով իր ճիգերն ու աշխատանքը հայրենի կառավարութեան հետ:

Պահանջատիրութիւնը էապէս Իրաւունքի իրաւական հետապնդում կ'ենթադրէ: Չմոռնանք որ Հողին համար էր որ գործադրուեցան Ցեղասպանութիւնը եւ Հայրենահանումը: Իսկ մեր ձեռքին մէջ՝ իրաւական անփոխարինելի փաստաթուղթ են Ուիլսոնի Իրաւաբար Վճիռը, Մելրի եւ Լոզանի դաշնագրերը, որոնց ամբողջական, մանրագին սերտողութիւնը եւ լուսաբանումը կատարուելու են անյապաղ...:

Տակաւին ուշ չէ կեանքի կոչելու հայ իրաւաբաններու Ներկայացուցչական Մարմին մը, որ մասնագիտօրէն եւ արհեստավարժ եղանակով կարենայ կազմել մեր Իրաւապահանջատիրութեան ամբողջական թղթածրարը, հիմնուելով այն դրոյթներուն վրայ, որոնք առկայ են միջազգային վերոնշեալ իրաւական փաստաթուղթերուն մէջ: Հատուցումի պահի նախապատրաստութեան համար, անհրաժեշտ հրամայական է ունենալ մեր ձեռքին՝ նմանատիպ թղթածրարը, կազմելու համար յստակ եւ իրատեսական ձեւակերպումը մեր հողային եւ այլ պահանջներուն:

Ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցը իսկական անկիւնադարձ մը կրնայ ըլլալ, եթէ մենք ա՛լ դադրինք զգացականօրէն մօտենալէ Հայ Դատին, եւ՝ կարենանք ստանձնել այն դժուարին, բայց միաժամանակ միակ արդիւնաւետ պարտականութիւնը, որ կը կոչուի՝ քաղաքագիտական եւ իրաւագիտական մօտեցումի կենսագործման ուղին: Դարադարձի անյետաձգելի առաջադրանքն է սա որոշապէս:

Դատ մը չի մեռնիր երբէ՛ք, մինչեւ այն ատեն որ անոր Տէրը չլքէ զայն: Իսկ զայն չլքելու եւ արդիւնաւետութեամբ հետապնդելու համար, լալն ու ողբալը, զգացական մօտեցումն ու այլոց բարեգթութեան կամ ողորմածութեան ապաւինիլը ժամանակի յումպէտս վատնում են անկասկած: Նոյնպիսի ժամանակի մսխում են՝ ցուցադրական քայլերը, որոնք պղպջակի նման պահ մը կը շլացնեն, ապա կը կորսուին անհետ...:

Հայ Դատի Պահանջատիրութեան արդիւնաւորումը ծրագրուած, հետեւողական լրջագոյն աշխատանք կ'ենթադրէ, իր քաղաքագիտական, իրաւագիտական եւ կազմակերպչական բազում երեսներով...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Հարցազրոյց

### Ինչո՞ւ է աւանդական սփիւռքը Հայաստանը «զիջում» ռուսաստանաբնակ հայ օլիգարխներին

#### Հեղինակ՝ Սիրանոյշ Պապեան

«Առաջին լրատուական»-ի գրուցակիցն է Միչիկընի համալսարանի Տիրպոնի մասնաճիւղի Հայագիտական հետազոտութիւնների կեդրոնի վարիչ, դոկտոր Արա Սանճեանը:



Հարցում. -Պարոն Սանճեան, աւանդական սփիւռքը կարծես իր տեղը զիջում է նոր սփիւռքին՝ Ռուսաստանում հայկական սփիւռքին, որտեղ ռուսական օլիգարխիան է՝ իր գումարների անյայտ ծագմամբ: Եթէ նախկինում զգալի էին աւանդական սփիւռքի ներդրումները եւ այլն, հիմա Ռուսաստանում հայկական սփիւռքն է ակտիվացել: Ի՞նչ հետեւանքնե՞ր սա կարող է ունենալ:

Պատասխան. -Ձեր նկատողութիւնը ճիշդ է յատկապէ՛ս եթէ դիտարկենք վերջին տարիներուն «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին կատարուած նուիրատուութիւնները՝ ամենամեայ թելեթոնի ժամանակ կամ այլ առիթներով: Բանաւոր աղբիւրներէ լսած եմ թէ դրութիւնը նոյնն է նաեւ դէպի Ս. Էջմիածին ուղղուող նուիրատուութիւններուն պարագային, թէեւ, ինչքան տեղեակ եմ, այս կապակցութեամբ հրապարակուած պաշտօնական տուեալներ չկան:

Ձեր բարձրացուցած հարցը երկու գուգահեռ երեսակ ունի: Իբրեւ սփիւռքի մէջ մեծցած ու բնակող անձ, համեմատաբար աւելի հաստատուն հիմերու վրայ կրնամ մեկնաբանել սփիւռքէն ներդրումներու ծաւալին յարաբերական նուագումը: Այստեղ կան մի քանի պատճառներ, զորս պիտի թուարկեմ՝ առանց անոնցմէ մէկին կամ միւսին առաջնահերթութիւն տալու: Առաջինը, 11 Սեպտեմբեր 2001-ի օդահէնութեան, 2003-ին՝ Իրաք ներխուժման եւ աւելի ուշ՝ 2008-ի տնտեսական ճգնաժամին հետեւանքով ամերիկեան տնտեսութեան կրած հարուածներն են, որոնք նոյնպէս կրճատած են ամերիկահայ համայնքէն ներս կատարուող մեծ նուիրատուութիւնները: Միջին ու համեստ խաւերուն



կողմէ իւրաքանչիւր տարի «Հայաստան» հիմնադրամի թելեթոնի ժամանակ փոքր նուիրատուութիւնները քիչ թէ շատ կը շարունակուին:

Երկրորդը դէպի Հայաստան ուղղուող մարդասիրական օժանդակութիւններու նուագումն է: Մփիւռքի կառոյցները չունէին բաւարար միջոցներ կամ ռեսուրսներ շուրջ 25 տարի շարունակ անհատոյց օգնելու հայրենիքին: 1980-ականներու վերջաւորութեան եւ 1990-ականներու սկիզբը ուղարկուած օժանդակութեան մէկ մասը հնարաւոր եղաւ միայն նախապէս սփիւռքեան շարք մը կառոյցներու յատկացուող նպաստները կրճատելով: Առաւել եւս, բազմաթիւ էին դէպքերը երբ ուղարկուած օժանդակութիւնը ամբողջութեամբ իր հասցէատէրերուն չհասաւ եւ անոր առնուազն մէկ մասը Հայաստանի մէջ իւրացուեցաւ անհատներու կողմէ: Եղան նաեւ պաշտօնատար անձինք, որոնք խոչընդոտեցին օժանդակութիւններուն տեղ հասնիլը՝ մինչեւ որ կաշառք կամ ուղարկուածէն իրենց բաժինը չստացան: Որոշ բարերարներ յօժարեցան այս պայմաններուն: Մի քանի տարի առաջ այդպիսի բարերար մը անձնական գրոյցի ժամանակ ինծի խոստովանեցաւ. «Հայաստան գիւղական դպրոցի մը տասը հաստ վառարան ուղարկեցի: Գիտեմ, որ անոնցմէ առնուազն երեքը տնօրէնին կամ ուսուցիչներուն տունները պիտի երթան, բայց դրկածիս միւս մասով գոնէ 6-7 դասարան տաքնալու միջոց կ'ունենան»: Ուրիշներ, սակայն, խորտչեցան այս աշխատելաճէն եւ տակաւ առ տակաւ կորսնցուցին հայրենիքին օժանդակելու իրենց սկզբնական եռանդը: Եղան դէպքեր, երբ բարեգործները, փոխանակ հայրենիքին «Հայաստան» հիմնադրամին միջոցով օժանդակելու, նախընտրեցին ստեղծել աւելի փոքր ծրագրեր, այն յոյսով թէ անոնց արդիւնաւէտ աշխատանքը վերահսկելը աւելի հեշտ կ'ըլլայ: Խանդավառութիւնը թուլացնելու մէջ իր դերն ունեցաւ նաեւ Հայաստանի մէջ վերջին տարիներուն խիստ շերտաւորուած ու բեւեռացած դասակարգային համակարգի մը յառաջացումը: Հայաստանի օլիգարխիական վերնախաւի զեխ կեանքը, անոնց կողմէ միլիոնաւոր տոլարներ երկրէն դուրս հանուիլն ու այդ միջոցներով արտասահմանի մէջ բազմաթիւ կալուածներ գնուիլը գաղտնիք չեն Հայաստանով հետաքրքրուած բազմաթիւ սփիւռքահայերու համար:

Երրորդը, աւանդական սփիւռքի գործարարներուն կողմէ Հայաստանի տնտեսութեան մէջ ներդրումներ կատարելու հարցն է, որ բարեգործութիւն չ'ենթադրեր: Բայց այստեղ ալ լուրջ արգելքներ են Հայաստանի իրաւական համակարգին անյուսալիութիւնը, գործարար աշխարհէն ներս հարցերը խնամի-ծանօթ-բարեկամի սկզբունքով լուծելը, քաղաքական ազդեցիկ անձանց կամ տեղի օլիգարխին կողմէ տրամադրուած «տանիք» ունենալու, զանոնք փայտտէր դարձնելու անհրաժեշտութիւնը, եւ այլն: Այս պարագային եւս, Հայաստանի մէջ իրենց բախտը փորձած սփիւռքահայ գործարարները կը բաժնուին երկու խումբի՝ համակարգին հետ համակերպողներու, որոնք մասամբ յաջողած են ու գոհ, եւ իրենց ճամպրուկները շալկած յետ վերադարձածներու: Թէեւ Հայաստանի Հանրային Հեռուստատեսութեան արտասահմանի համար սփռուող հաղորդումները բացառապէս կը հիւրընկալեն առաջին խումբի ներկայացուցիչները եւ կը տարածեն իրենց օրինակով հայրենիք հաստատուելու անոնց կոչերը, Հայաստանի մէջ յաջողութեան չհասած գործարարներուն պատմութիւններն ալ, իրենց կարգին, բերնէ բերան, արագօրէն կը տարածուին աւանդական սփիւռքէն ներս:



Ռուսաստանի հայագաղութի աճող դերին մասին շատ քիչ բան կրնամ ըսել՝ քանի որ օրեր Հայաստանի հաշուին ուռճացող այդ համայնքներուն եւ ւսանողական սփիւռքի միջեւ կապերը շատ թոյլ են: Կարելի է նոյնիսկ ըսել թէ այդպիսի կապեր համարեա չկան: Օրինակ, ես չեմ գիտեր թէ, եթէ դուրս հանենք Հայաստանէն մշտապէս Ռուսաստան փոխադրուած մարդկանց եւ «խոպանչիներու» դրամական փոխանցումները իրենց մերձաւորներուն, ի՛նչ է համեմատութիւնը Ռուսաստանէն մեծահարուստներու եւ միջին ու աղքատիկ խաւի մարդկանց կողմէ ամէն տարի «Հայաստան» հիմնադրամին կատարուած նուիրատուութիւններուն: Դիտելով հեռուէն, կրնամ միայն մի քանի նախնական դատողութիւն ընել Ռուսաստանի մէջ յառաջացած հայ նոր օլիգարխներուն մասին: Անոնք շատ աւելի սերտ կապեր ունին Հայաստանի ներկայ վերնախաւին եւ իշխանաւորներուն հետ՝ քան ւսանողական սփիւռքի մեծահարուստները: Ամենօրեայ կեանքի այլազան երեւոյթներուն հանդէպ անոնց ճաշակներն ալ աւելի մօտ են՝ քան սփիւռքահայ մեծահարուստներունը: Առաւել, մոսկուաբնակ շատ մը հայ օլիգարխներ Հայաստանի ծնունդ են, եւ անոնց մի քանիին եղբայրներն ու այլ մերձաւորները ազդեցիկ պաշտօններ ունին Հայաստանի պետական համակարգին մէջ: Կ'ենթադրեմ թէ Հայաստանի կամայական միանալովը Մաքսային կամ Եւրասիական միութիւններուն, նախագահ Վլադիմիր Պուտինի վարչակարգը ջանք պիտի գործադրէ, որ մոսկուաբնակ այդ օլիգարխները աւելի ու աւելի ազդեցիկ դառնան՝ ի հաշիւ հայաստանաբնակ օլիգարխներու եւ յատկապէս՝ արեւմտեան երկիրներէ ժամանած կամ տակաւին այդ երկիրներուն մէջ բնակող սփիւռքահայ ներդրողներու: Պուտինի ծրագիրն ըլլալ կը թուի ռուսական մշակոյթի իբրեւ թէ ինքնուրոյնութեան բացարձակացումն ու զանիկա հակադրելը արեւմտեան, իր կարծիքով՝ «անկումային», քաղաքակրթութեան: Այդ պատճառով, հնարաւոր է, որ եւրասիական Միութեան անդամակցելէ ետք, Հայաստանի մէջ եւս սեղմումներու ենթարկուին ո՛չ միայն օտարերկրայ դրամաշնորհներ ստացող հասարակական կազմակերպութիւններն ու հիմնադրամները, կառավարութեան ընդդիմացող քաղաքացիական շարժումներու մէջ գործունեայ սփիւռքահայ հայրենադարձ անհատներ, այլեւ արեւմտեան երկիրներէ եկած ներդրողները:

Կայ նաեւ երկարաժամկետ այլ վտանգ մը՝ կապուած Հայաստանի եւ արտասահմանի հայութեան ժողովրդագրական տեղաշարժերուն հետ: Մինչ Հայաստանն այսօր կը պարպուի ի հաշիւ Ռուսաստանի հայագաղութին, սփիւռքի ւսանողական գաղութներէն ալ արտահոսքը գլխաւորաբար դէպի Ամերիկա է: Եղեռնէն անմիջապէս ետք, հայկական ստուար գաղութներ յառաջացան Ամերիկայի, Եվրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի բազմաթիւ մեծ ու փոքր պետութիւններու սահմաններէն ներս: Անոնց միջեւ կապերը կը պահպանուէին սփիւռքի մէջ գործող հայ քաղաքական կուսակցութիւններու, իրենց վերահսկողութեան տակ գտնուող մշակութային ու մարզական միութիւններու, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ աւելի նուազ չափով՝ եկեղեցական կառոյցներու ու հայրենակցական միութիւններու կողմէ: Ներկայիս, ԱՄՆ եւ Ռուսաստան հսկայ երկիրներ են, որոնց քաղաքացիները ինքնաբաւ ապրելու հնարաւորութիւն ունին՝ առանց շատ կապ ունենալու արտաքին աշխարհի հետ: Առաւել եւս՝ յետ-խորհրդային Հայաստանէն արտագաղթած Ռուսաստանի ու եւրոպայի նորաստեղծ գաղութներուն մէջ այդ ւսանողական կազմակերպութիւնները չկան, իսկ անոնց դերը կատարող միաւորումները նոր պիտի



ստեղծուին: Եթէ ԱՄՆ եւ Ռուսաստան շարունակեն հակամարտ պետութիւններ մնալ՝ իւրաքանչիւրը հնարաւորին չափ լայն ազդեցութեան գօտի ապահովելու ձգտումով, այդ երկիրներու մեծ հայազաղութները կամայ-ակամայ կրնան իւրաքանչիւրն իր կառավարութեան կամակատարը դառնալ՝ Հայաստանի քաղաքականութիւնը ուղղորդելու համար: Այսպիսի բացասական հաւանականութիւն մը բացառելու կամ անոր հետեւանքները մեղմացնելու համար անհրաժեշտ է, որ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի հայկական ազդեցիկ կազմակերպութիւնները գոյացնեն մշտական ֆորումներ՝ իրարու հետ միտքեր փոխանակելու եւ համագործակցութեան հնարաւոր եզրեր գտնելու համար: Այդ կապերը նախընտրաբար առանց Հայաստանի կառավարութեան անմիջական մասնակցութեան պէտք է ըլլան՝ որպէսզի այդ հանդիպումներու ընթացքին գերակշռեն հեռանկարային եւ ո՛չ թէ անմիջական քաղաքական խնդիրները:

(շարունակելի)

## Տեսակէտ

### **Յիւնամեակէն Մինչեւ Նախահարիւրամեակ Ի՞նչ Ըրինք Եւ Չըրինք Բարձրաձայն Խորհրդածութեան Կարգով**

#### **Պարոյր Յ. Աղպաշեան, Պէյրութ, 25 Յունիս 2014**

Հայկական Յեղասպանութեան 100րդ տարելիցի նախաշեմին կը գտնուինք: Ընդամենը տարի մը ու՝ կը բոլորենք այդ հարիւրամեակը:



Կազմուած է համապետական-համազգային կեդրոնական վերին մարմին, ուր իշխանութիւն, եկեղեցի ու սփիւռք՝ իրենց խայտաբղետ ներկայացուցիչներով կը հովանաւորեն, կը համախմբեն ու կը բաղկացնեն հոսանքները:

Սփիւռքահայութիւնը եւս, իր համայնքային ու գաղթաշխարհային շերտաւորումներով, կազմած է իր կեդրոնական մարմինները, դարձեալ կուսակցական-եկեղեցական-միութենական ներկայացուցիչներով:

Ողջունելի են այս բոլորը, բայց, հարցադրելին այն է, որ հարիւրամեակը ի՞նչ ուժականութիւն պիտի ունենայ, ի՞նչ արդիւնաւէտութեան պիտի յանգի, հուսկ՝ ինչպէ՞ս պիտի գնահատուի իր դերակատարութիւնը, ինչպէ՞ս պիտի արժեւորուի իր գործունէութիւնը:

Ասոնք բնական ու նոյնիսկ անխուսափելի հարցադրումներ են, որոնք կը ծագին (պէ՛տք է ծագին) իւրաքանչիւր հայորդիի մտքին մէջ, երբ Հայկական Յեղասպանութեան համապատկերը կը պարզուի մեր առջեւ, անցնող հարիւրամեակի լոյսին տակ:





Իրաւունք ունի՞ թէ չունի հայը՝ հայրենական թէ սփիւռքահայ, այս տեսանկիւնէն մօտենալու Հայկական Յեղասպանութեան հաստկեկ թղթածրարին, որ կը բաղկանայ բազմագոյն, բազմաշերտ ու բազմակողմ մանրամասնութիւններէ եւ իրադարձութիւններէ, տեղեկագրութիւններէ եւ արձանագրութիւններէ:

Ինչո՞ւ այս արագ մտորումը:

Եթէ հարիւրամեակը, պայմանականօրէն բաժնենք երկու մասի, անմիջապէս պիտի նկատենք ու հաստատենք, թէ առաջին յիսնամեակին աւարտը, իր կայացումով, բնոյթով ու գործընթացով, «բեկում» առաջացուց առ այդ Մեծ Եղեռնի ոգեկոչման արարողութեանց մէջ, երբ 1965ը դարձաւ անկիւնադարձային, պահանջատիրական, իրաւական ու հատուցողական կարգախօսային առաջադրանքներով:

Կը նշանակէ թէ՛ Լիբանանէն հնչող այդ ազդանշանը կ'աւետէր նոր լիցքով ու աւիւնով լծուիլ Հայկական Յեղասպանութեան պահանջատիրական ընդհանրական գործօնին, այսինքն՝ չմնալ միայն հայկական ծիրէն ներս, չբարարուիլ ներհայկական յիշատակի հանդիսութիւններով, չգոհանալ «մանրաքայլ» յառաջդիմութիւններով կամ յաջողութիւններով:

1965ի բազմահազար հանրահաւաքը, որ տեղի ունեցաւ ոչ միայն հայութեան մասնակցութեամբ, այլեւ Լիբանանի պետական աւագանիի ակնառու դէմքերու ներկայութեամբ, շուտով իր դրական ու զօրակցական վարակիչ հետեւանքները ունեցաւ այլ հայագաղութներու մէջ, ընդհուպ՝ Խորհրդային Հայաստան, ինչ որ աւելի քան բարացուցական էր, որ յաջորդ յիսնամեակը նոր թոփփ ու տեսիլք կը պարտադրէր համայն հայութեան:

Եւ իրօք, ի՞նչ բանը կ'արգիլէր որ համայն հայութիւնը այլեւս չմնար իր սգահանդեսային ու սգաոգեկոչման արտայայտամիջոցներուն ու կազմակերպչականութեան մէջ, երբ ժամանակը հասած ու հասունցած էր նոր որակաւորում կամ նոր դրսեւորում տալու անոր, այնքան ատեն որ Մեծ Եղեռնը, Հայկական Յեղասպանութեան գործադրութիւնը, ահաւոր եւ աննախընթաց գերհարուած մըն էր, շարտուած ոչ միայն հայ ժողովուրդի, այլեւ՝ համայն մարդկութեան երեսին:

Այդ տրամաբանութեամբ, եթէ երկրորդ յիսնամեակի աշխատանքային արդիւնաւետութեան հաշուարկումը կատարենք, անկասկած, պիտի նկատենք որ ուշագրաւ ու զգալի ներդրումներ արձանագրուած են Հայկական Յեղասպանութեան հաստափոր թղթածրարէն ներս, յատկապէս անոր տալով, միջազգային չափանիշով, ընդունումի ու ճանաչումի բարենշեղի բովանդակութիւն:

Սակայն, եթէ անաչառ եւ առարկայական սկզբունքով մօտենանք տարուած աշխատանքներուն, հիմնովին անբարարար պիտի նկատենք այդ յաջողութիւնները, պարզագոյն հասկացողութեամբ մը, որ շատ աւելին կ'ակնկալուէր հայ ժողովուրդէն, Հայկական Յեղասպանութեան իրողական յառաջընթացին տալու աւելի գործունեայ, կենսունակ ու շօշափելի թափ:



Ճիշդ է, Հայ Դատի համապատասխան մարմիններ շարունակեցին իրենց ճիգերը, մի՛շտ, Հայկական Ցեղասպանութիւնը, յաչս օտար պետութիւններու կամ շրջանակներու, լուսարձակի տակ պահելու, սակայն, ատոնք ո՞րքան ազդու եղան, ո՞րքանով արդիւնաբեր դարձան, մանաւանդ երբ կը նշմարուի, թէ համահայկական ու համագործակցական մասնակցութիւնը յաճախ եղած է վտիտ, իսկ այդ մէկը աննկատ չէ մնացած կամ ուշադրութենէն չէ վրիպած պատկան այն պետութիւններէն, որոնց կը դիմուէր եւ անոնցմէ կ'ակնկալուէր որոշակի զօրակցութիւն:

Անշուշտ, հայութեան նպատակը երբեք չէ եղած (ու չէ՛) ողորմութիւն կամ համակրութիւն փնտռելը կամ խնդրելը միջազգային խաչմերուկներէն, այլ խոր հասկացողութիւն ու գիտակցութիւն, հուսկ՝ գործնապաշտ տեղաշարժի զգաստութիւն, մէկ կողմէն՝ համամարդկային այս հիմնախնդիրին նկատմամբ ցուցաբերելու վերին աստիճանի լրջութիւն ու հետապնդում, միւս կողմէն՝ ցեղասպանութեան ժառանգորդներուն ստիպելու իրենց պատասխանատուութիւնները ստանձնելու:

Այսօր, հայ ժողովուրդը, արդարօրէ՛ն, իր շեշտը կը դնէ հատուցման պահանջատիրութեան վրայ, սակայն, եթէ ատիկա պիտի մնայ լոկ իր նշանախօսային կամ լոզունգային պարունակին մէջ, առանց պատմավաւերական եւ իրաւապաշտպանական տուեալներու, արդեօք ո՞րքանով կրնայ ծառայել Հայ Դատի թղթածրարի լիարժէքութեան:

Զմոռնալ (եւ պէտք չէ մոռնալ), որ Հայաստան-Թուրքիա փրոթոքոլային տխրահոշակ համաձայնութիւնները ինչպիսի՛ահաւոր ցնցում առաջացուցին հայ ժողովուրդի մեծամասնութեան եւ յատկապէս տարագրուած հատուածի ժառանգորդներուն մօտ, որովհետեւ այդ քայլին դիմուած էր առանց ժողովուրդին բազկերակը շօշափելու, ի հարկէ՛ եթէ «քաղաքական միամտութեամբ» վերաբերուինք այդ անարգելի երեւոյթին հետ:

Կայ աւելի տազնապեցուցիչը. այդ համաձայնութիւնները տակաւին «շնչող» են, որովհետեւ չեն թաղուած, այլ... կասեցուած, եւ այդ է պատճառը, որ, մերթ ընդ մերթ, խորհրդաւոր անկիւններէ եւ կողմերէ ականջալուր կ'ըլլանք անոնց շարժերուն ու խլրտումներուն, թէկուզեւ այլ հարթակներու ծալքերէն:

Ինչպէս այլ կաղացումներու պարագային, այս մէկը եւս պէտք չէ մտահան ընել, որովհետեւ պահանջատիրութեան գործը արգելակող, այլեւ խանգարող եւ ապակողմնորոշող ազդակ մըն է ատիկա, իր փրոթոքոլային թէ փրոթոքալամետ տարբերակներով, Դամոկլեան սուրի նման կախուած ըլլալով... մեր գլխուն:

Ահա թէ ինչո՛ւ կ'ըսենք ու կը կրկնենք. դէպի հարիւրամեակ սուրացող հարիւրամեակի մարմինները, իրենց գերկեղորոնական, միջկեղորոնական կամ ներկեղորոնական ներկայացուցչութիւններով, կրցա՞ծ են իրենց ծրագիրները համակարգել ու ներդաշնակել, հունաւորել ու դրսեւորել, թէ՞ ընթացիկին կողքին, իւրաքանչիւրը՝ իր պայմաններուն յարմարութեամբ ու համակերպուածութեամբ կը գործէ:



Առանց թերագնահատելու նախաձեռնութիւնները՝ իրենց տարուած ու տանելի հոլովոյթներով, արդեօ՞ք ասիկա է պահանջուածը կամ ասորով պէտք է միայն լիանալ, ի դէմս մէկ դարեայ պահանջատիրական երթին:

Մեր կարծիքով, Հայկական Յեղասպանութեան հետապնդման ու Հայկական Պահանջատիրութեան արժեւորման գործին մէջ, անյետաձգելիօրէն անհրաժեշտ է պատրաստել ցեղասպանագէտներու փաղանգներ, որոնք քաղաքագիտական, օրէնսգիտական եւ իրաւագիտական մասնագիտութեամբ զինուած, այս ծանրակշիռ փաթեթը շրջանառութեան մէջ դնեն, միջազգային բազմաճիւղ ոլորտներուն մէջ զայն հիմնաւորելու առաջադրանքով:

Արհեստավարժութիւնը, այլե՛ւս, ամբողջական պարտաւորութիւն մըն է, որ ճամբայ բանալու ու հարթելու ուժականութեամբ մարմնաւորուելէն բացի այլընտրանք չի կրնար ունենալ:

Ուրիշ կարելոր աշխատասիրութեան հարկադրութիւն մըն է միջազգային պահեստանոցներու (արխիւներու) բացումը, ապա՝ պեղումը, բացայայտումն ու հրապարակումը, որոնք դարձեալ փորձագէտներու գործն են, միշտ մասնագիտական գիտելիքներով, հնարքներով եւ յատկութիւններով համալրուած:

Նոյնքան հրատապութիւն կը ներկայացնէ, մասնագիտական ու մտաւորական շրջանակներով, թուրքեր ներառելու հաւանականութիւնը, երկխօսութեամբ թէ բազմակարծութեամբ, Հայկական Յեղասպանութեան թղթածրարը սեղանի վրայ դնելու:

Այս ուղղութեամբ, բարեբախտաբար, դողդոջուն քայլեր կ'առնուին, սակայն օգտակարը այն պիտի ըլլայ, որ այդ ընթացքը «առաւել աշխատունակ» դառնայ, ծրագրուած ու համադրուած գործելառճով:

Հարիւրամեակի մարմինները, հայաստանեան թէ սփիւռքեան մակարդակներով, խորհրդածելի չէ՞, ինչո՞ւ կազմուած չեն մասնագիտական պատկանելիութիւն, հեղինակութիւն ու փորձառութիւն ունեցող տարբերէ, շարունակելով, տասնեակ տարիներէ ի վեր, համայնքային, կուսակցական, միութենական ներկայութիւններէ կազմուած դրուածքները, թերեւս, միակ տարբերութեամբ, որ այժմ հոն մուտք գործած են հայրենական պետական այրեր:

Ահա թէ ինչո՞ւ մեր այս գրութիւնը խորագրեցինք՝ «Ի՞նչ ըրինք» (լաւ իրագործումներու) եւ «Ի՞նչ չըրինք» (անբաւարար տնօրինումներու) վարկածներով, որովհետեւ երկրորդ յիսնամեակը, ինչպէս վերը յիշուեցաւ, նոր հարթութեամբ ու նոր հորիզոնականութեամբ չկրցաւ նպաստել Հայկական Յեղասպանութեան երկարահար եւ երկարաշունչ գնացքի յառաջմղումին:

Վերջին հաշուով, փաստ ըլլալէ չի դադրիր. առաջին յիսնամեակը պարտաւորեցնող էր, երկրորդ յիսնամեակը՝ բազմակիօրէն պարտաւորեցնող, իսկ հարիւրամեակը՝ գերպարտաւորեցնող, մանաւանդ երբ՝ արդի Թուրքիան, ակռաները սրած, արդէն պատրաստուած է հակադրուելու ու հակազդելու:



## ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՊԱՏՄԱԲԱՆ ՍՏԵՓԱՆ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ ԱԿՆՈՑՈՎ

### «ՄԵՆՔ ԱՉԳ ՄԸՆ ԵՆՔ, ՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹ-ՉՈՒՆԻ, ԱՉԱՏ ՄՏԱԾԵԼՈՒ ԶԵՒ ՉՈՒՆԻ»

ԽՄԲ. - Ստորեւ կը ներկայացնենք՝ ՆՈՐ ՅԱՌԱՋ թերթէն քաղուած, Պըրքլիի համալսարանէն պատմաբան ՍՏԵՓԱՆ ԱՍԱՏՈՒՐԵԱՆԻ հետաքրքրական վերլուծումը Հայաստանի 3-րդ Հանրապետութեան հաստատման մասին, զոր ան ներկայացուցած է Ապրիլի սկիզբը Երեւանի մէջ տեղի ունեցած բանախօսութեան ընթացքին:

Ստեփան Ասատուրեան բանախօսութեան սկիզբը անդրադարձաւ յետ-խորհրդային



Հայաստանի զարգացման քանի մը յատկանիշներուն, որոնք կը բացատրեն ներկայ կացութեան պատճառները, ըսելով թէ ոեւէ մէկը չէր նախատեսեր Խորհրդային Հայաստանի փլուզումը, ինչ որ կը նշանակէ թէ Կովկասի այդ շրջանը գտնուող երկիրները՝ Հայաստան, Ատրպէյճան եւ Վրաստան անկախանալու ո՛չ մէկ փափաք ունէին եւ մտայնութիւնն ալ պատրաստ

չէր այդ ուղղութեամբ: Երբ փլուզուեցաւ Խորհրդային Միութիւնը նոր ընթացք մը սկսաւ եւ այդ շրջանին մէջ Հայերը վերջինը եղան որ հռչակեցին իրենց անկախութիւնը, քանի որ այլ ելք ալ չունէին, հետեւաբար անկախութիւնը փափաքի մը կամ պատրաստութեան մը արդիւնքը չեղաւ: Ան գուցադիպեցաւ Ղարաբաղի հաւաքական ու վերամիացման շարժումին, որ սկսած էր 1988-ին: Իսկ այդ շարժումին յատկանիշները զանգուածային ցոյցերն էին, ուր հարիւր հազարաւոր մարդոց առջեւ ելոյթ կունենային քանի մը անձեր, որոնք յետագային դարձան մեր երկրին ղեկավարները: Այդ տղաքը ակադեմականներ էին, որոնցմէ ոեւէ մէկը պետական փորձառութիւն չունէր: Ուրեմն արկածախնդիր ձեռով պետութիւն մը ստեղծուեցաւ՝ բարեկամներ այս ու այն կողմ դեսպան նշանակուեցան, որոնք դիւանագիտական ո՛չ մէկ պատրաստութիւն ունէին: Անտեսուեցան սովետական օրերու հայ փորձառու դիւանագետները եւ այդ խանդավառ մթնոլորտին մէջ ստեղծուեցաւ նոր ընտրանի մը: "Ես, Ֆրանսայի մէջ ունեցած ուսանողական տարիներու փորձառութենէս մեկնելով շատ զգոյշ եմ ուղղակի ժողովրդավարութեան հոլովոյթէն (la démocratie directe), եւ ըստ իս, նման երեւոյթ մը բնա՛ւ ալ ժողովրդավարական չէ: Խօսքս ստեղծուած այդ նոր ընտրանիի մասին է, որ դէմ յանդիման գտնուեցաւ դարաբաղեան պատերազմին, որ 1992-ին



արդէն վերածուեցաւ ամբողջական պատերազմի: Հայաստանի կացութիւնը հասկնալու համար, պէտք է ի մտի ունենալ որ պետութիւնը ստեղծուած է ոչ-արհեստավարժ մարդոց կողմէ՝ պատերազմի միջավայրի մէջ, որ ունի որոշ յատկութիւններ, երբ խումբ մը մարդիկ կը ստանձնեն ղեկավարութիւնը եւ իրենց ուզածը կը պարտադրեն ժողովուրդին: Ահաւասիկ մեր այսօրուան եւ նախորդ նախագահները Ղարաբաղի պատերազմի «ծնունդ» են եւ Հայաստան եկած են Լեւոն Տէր-Պետրոսեանի շնորհիւ", ըսաւ քանախօսը:

Ինչպէս այլ հանրապետութիւններ, Հայաստանի մէջ ալ սովետական համակարգով համադրուած տնտեսութիւնը փլաւ եւ առիթը ստեղծուեցաւ արեւմտեան կարգերու հապճեպ միտքերու հիման վրայ կառուցելու՝ այսպէս կոչուած սեփականաշնորհուած տնտեսութիւնը, որ դուր քացաւ զանգուագային կողոպուտի եւ կարգ մը անգութ, դաժան նոր հարուստներ՝ Ամերիկայի տնտեսութեան տխրահոչակ հիմնադիրներու օրինակով, հիմքը դրին Հայաստանի տնտեսութեան: "Հոս պէտք է ըսեմ, թէ 1997-ի աւարտի տուեալներով, երբ փոքր եւ միջին իրերու 80 առ հարիւրը սեփականաշնորհուած էր եւ 800 միլիոն տոլար եկամուտ կը սպասուէր անկէ, արդիւնքը գիտէ՞ք որքան եղած է՝ միայն 700 հազար տոլար, այսինքն՝ մէկ-հազարերորդը: Իսկ այդ երկուքին տարբերութիւնը «շոգիացած» է...: Այնուհետեւ յառաջացած է Ղարաբաղի հարցի լուծման խնդիր: Իսկ այն օրերուն կայացած կարեւոր որոշումներ ինչպէս՝ Արցախի միացումը Հայաստանին, արդէն չեղեալ նկատուած է եւ պաշտօնական ճանաչում ալ չէ եղած: Այս ամէնը կըսեմ ընդգծելու համար որ այն անձերը որոնք ժողովուրդը խանդավառող գաղափարներով գործի գլուխ անցան, հազիւ ղեկավար դարձած՝ մոռցան այդ նոյն միտքերը...", ընդգծեց Ստեփան Աստուրեան:

"1997-ին Արեւմուտքի ճնշումին տակ եւ երեւակայական խոստումներով ճիգ եղաւ «Ղարաբաղի հարցին լուծում մը գտնելու» - որուն անձնապէս վկայ եղած եմ - եւ այս գործին մէջ միջամուխ էին Վազգէն Սարգսեանը, Սերժ Սարգսեանը եւ Ռոպէր Քոչարեանը՝ տարբեր դերակատարութեամբ: Այնուհետեւ տեղի ունեցաւ Խորհրդարանի սպանութիւնը եւ 2001-2002 թուականներուն նոր համակարգ մը ստեղծուեցաւ, որու հետեւանքով Լեւոն Տէր Պետրոսեանի սեփականաշնորհման երեւոյթները քարացան եւ տնտեսութիւնը յատուկ «դիմագիծ» մը ստացաւ, ուր մրցակցութեան փոխարէն գոյացան անձնական մենաշնորհներ, որոնք բնականաբար հեռու էին իրական տնտեսութիւն ըլլալէ, հում եւ հանքային նիւթերը վաճառուեցան օտար ընկերութիւններու՝ յաճախ ոչ-յատակ պայմաններով: Հետեւաբար 1990-ական թուականներու բոլոր յատկանիշները կարծրացան, իսկ 1995-ին խաթարուեցան խորհրդարանական ընտրութիւնները, քանի որ ժողովըրդավարական համակարգ գոյութիւն չունէր եւ քուէարկութիւնները իրականութեան մէջ անհեթեթ «ծիսակատարութիւն» էին: Անկէ ետք 1994-1996-ի միջեւ ճամբայ մը գծուեցաւ եւ մշակուեցաւ յատուկ տնտեսութիւն մը, որ կապուած էր յատուկ քաղաքական դրութեան հետ: Իսկ 1998-էն յետոյ բացի քաղաքական-տնտեսական համակարգի քարացումէն, յատուկ նոր երեւոյթ մը չարձանագրուեցաւ եւ նոյնիսկ 2008-ի դէպքերը - որու պատճառով մարդ սպաննուեցաւ - հետեւանք էին քուէարկութեանց խարդախութեան երբ թոյլ չտրուեցաւ, որ ժողովուրդի կամքը իրականանայ...: Ուրեմն ներկայի վիճակը վերոնշեալ իրականութիւններու վրայ հիմնուած է, առաւել յաւելեալ ծանօթ հետեւեալ տուեալին վրայ.- Պ. Քոչարեանի տարիներուն սկսած էր արդէն Ռուսաստանին փոխանցելու խոշոր տնտեսութեան տարրերը՝ ի դիմաց փոքրիկ



պարտք-գումարներու եւ ատիկա այսօր ալ կը շարունակուի եւ մէկ խօսքով օտար ընկերութիւններ մեր տնտեսութեան սեփականատէրն են: Յիշենք վերջին «առեւտուրը»՝ երբ ամերիկեան ոչ-թափանցիկ ընկերութիւն մը գնեց Հայաստանի Ելեկտրակայանը», - ըսաւ ան:

"Այլ խօսքով, ներկայիս ունինք երկիր մը որ իր հիմնական տնտեսական կառոյցները չի ղեկավարեր, իսկ զինուորական գետնի վրայ ալ կատարելապէս կախեալ է Ռուսաստանէն, հետեւաբար նախատեսելի էր, որ Հայաստան պիտի միանար Մաքսային Միութեան: Այսօր Հայաստանի մէջ մեծ թիւ կը կազմէ այն խաւը որ ո՛չ կ'ուզէ «գանգատիլ» եւ ցոյց ընել, ո՛չ կ'ուզէ համակերպիլ եւ մնալ, այլ կ'ընտրէ երրորդ ճամբան՝ ձգել ու հեռանալ, արտագաղթել: Այս վերջին ելքը աւեր կը նկատուի երկրին համար, քանի որ բնականաբար Հանրապետութիւնը կը կորսնցնէ կարող մարդիկ, ժողովուրդը «շնորհիւ» դուրսէն եկած դրամներու արուեստական ձեւով կը գոյատեւէ եւ այդպէսով ալ անոր դժգոհութիւնը կը կասեցուի...":

"Այսօր Հայաստանի բնակչութեան թիւը 1,7-էն 1,9 միլիոնի միջեւ է, ծննդաբերութիւնը 1990-ական թուականներէն ասդին անկումի մէջ է եւ 2050-ին արդէն ծերացած բնակչութիւն մը պիտի ունենանք...":

Վերոնշեալ հարցերու մասին իր տեսակէտը եւ քննարկումը կատարելէ ետք յարգելի բանախօսը ըսաւ, թէ կը դժուարանայ կանխատեսել Հայաստանի ներկայի կացութեան փոփոխութիւնը, քանի որ ներկայի ղեկավարութեան մօտ պետական մտայնութիւն եւ ազգային ծրագիր գոյութիւն չունի:

Բանախօսութեան աւարտին կայացաւ հարցում-պատասխանի բաժին մը: Արտագաղթի ահաւոր երեւոյթի վերաբերեալ հարցումի մը պատասխանելով, ան ըսաւ, թէ ատոր առաջը առնելու համար մեզի կը պակսին կառուցային այն խոր արմատները, որոնք կը բնորոշեն երկրին ապագան: Նաեւ կարելոր է տնտեսական զարգացումը, որու համար ալ նախ եւ առաջ հարկաւոր է ներքին շուկայի ստեղծումը: Ան շարունակեց ըսելով թէ յամենայն դէպս պէտք չէ անտեսել դրական այն երեւոյթը որ նոր սերունդ մը կայ որ չէ ապրած սովետական կարգերը եւ այդ սերունդին միջոցաւ է, որ հաւանաբար բան մը կրնայ փոխուիլ Հայաստանի մէջ: Իսկ այս ուղղութեամբ Սփիւռքի դերակատարութեան մասին հարցումի մը պատասխանելով Պ. Աստուրեան նշեց, թէ ինք լաւատեղեակ ըլլալով սփիւռքահայ կեանքին կրնայ ըսել, թէ հոն տակաւին Հանրապետութեան կացութիւնը փոփոխութեան ենթարկելու գիտակցութիւնը գոյութիւն չունի եւ ասոր համար գլխաւոր դերակատարութիւն ունին քաղաքական կազմակերպութիւններն ու անոնց ղեկավարները եւ ընդհանուր մտայնութիւն մը կայ, թէ՛ պէտք չէ քննադատել, պէտք է հայրենասէր ըլլալ, օր մը լաւ պիտի ըլլայ, եւայլն..., իսկ այս ամէնը բացասական երեւոյթներ են, քանի որ կը նշանակէ թէ մենք ազգ մըն ենք որ քաղաքական մշակոյթ չունի, ազատ մտածելու ձեւ չունի, զիրար յարգելով հանդարտ ու պաղարիւն կերպով վիճարկելու ատակ չենք, «թէ տարակարծիք ես ուրեմն թշնամի ես»ի մտածելակերպը առկայ է...: Եւ մինչեւ որ այս երեւոյթը փոփոխութեան չենթարկուի մենք չենք կրնար միասնաբար ժողովրդավար կարգերով երկիր մը կերտել: Ամէն ինչ պէտք է իրապաշտութեան սառն մօտեցումով արժեւորուի, որովհետեւ վիպապաշտ գաղափարները եւ երագային միտքերը տեղ մը չեն հասցներ: Միւս կողմէ սակայն հաւատք պէտք է ունենալ,

որուն պէտք է միանայ տրամաբանութիւնը: Իսկ ամենէն կարելորը մտային ուժն է, եզրափակեց բանախօսը:

Աղբիւր՝ ՆՈՐ ՅԱՌԱՋ

## Ընդիմադրութիւնը Ո՞ր Հորիզոնականին Վրայ Է

**Պարոյր Աղպաշեան,**

**Պէյրութ, 25 Մայիս 2014**

Հայաստանի մէջ ընդդիմութիւն կա՞յ, աւելի ճիշդ՝ մնա՞ց, իր իսկական՝ բովանդակութեամբ եւ արդիւնաւէտութեամբ:



Խօսքը բնաւ չի վերաբերիր այն ցոյցերուն, որոնք գրեթէ ամենօրեայ դրութեամբ տեղի կ'ունենան հոս ու հոն, սակայն, յաճախ, բուռ մը մասնակիցներով, բողոքելու այս կամ այն երեւոյթին դէմ:

Կասկած չկայ, որ իսկական ընդդիմութիւն, իր լայնահունչ ու լայնածիր

բովանդակութեամբ, կար երկրորդ եւ երրորդ նախագահափոխութեան եւ նախագահակրկնութեան եւ անոնց յաջորդող շրջաններուն, երբ ամբողջ մայրաքաղաքը կ'ողողուէր մարդկային ծովածաւալ ալիքներով:

Ընդդիմութեան պատասխանատուները, մէկ կոչով, մէկ յայտարարութեամբ, մէկ կարգախօսով, «լեռներ շարժել»ու չափ մարդ կը հաւաքէին, որ կը փութար իր քաղաքացիական պարտականութիւնը կատարելու, իր ներկայութիւնը զգացնելու:

Հաւատք կար ժողովուրդին մօտ, վստահութիւն ընդդիմախօսներուն հանդէպ, վճռակամութեամբ զինուած էր, ի դէմս այն անարդարութիւններուն ու բռնատիրութիւններուն, զրկանքներուն ու հալածանքներուն, որոնց կ'ենթարկուէր հասարակութիւնը, ըստ իրեն, մեկնելով այն պահանջներէն եւ իրաւունքներէն, որոնցմէ անարդարօրէն զրկուած էր:

Ամենէն երեւելի եւ զգալի չարաշահութիւնը կը պարզուէր նախագահական, պատգամաւորական, մարգպետական եւ քաղաքապետական ընտրութիւններու ստուգատեսին, ուր կ'արձանագրուէին խիստ կոպիտ խախտումներ ու զեղծումներ, խարդախութիւններ ու կաշառակերութիւններ, շատ յաճախ թափանցիկ եւ ակնբախ



միջոցներով, որոնց կ'անդրադառնային ներքին (տեղական) եւ արտաքին (միջազգային) աղբիւրներ:

Անշուշտ, իշխանական կամ յաղթական կողմը, ոչ միայն կ'անտեսէր այդ վերագրումները, այլեւ բուռն կերպով կը հակադդէր, շատ յաճախ ալ վկայակոչելով օտար դէտերու «դրական» արտայայտութիւնները, որոնք կ'ընդունէին ատոնց «օրինականութիւն»ը, առանց ամչնալու «բայց» մը աւելցնելով ու թուելով սուր օրինազանցութիւններ:

Այս բոլորը զայրոյթ ու պոռթկում կ'առաջացնէին ժողովուրդին մօտ, որ հետամուտ էր արժանապատիւ ու բարեկեցիկ կեանք մը վայելելու, բայց, վիճելի չէ, առանց զայն գտնելու այս կամ այն իշխանութեան մօտ:

Արդի՞նք, հետեւիլ ընդդիմութեան շարժումներուն, գործադրել անոնց ցուցմունքները, շարունակել պայքարը, մնալ պատնէշի վրայ:

Հեռանկա՞ր, լծուիլ իշխանափոխութեան, պատրաստուիլ բարեկարգութեան, նախաձեռնել նորարարութիւններու, կազմակերպուիլ հաւաքականօրէն:

Ո՞վ չի յիշեր այն փոթորկայոյզ հանրահաւաքները Ազատութեան հրապարակին վրայ, Օփերայի շրջափակին մէջ, Բաղրամեան պողոտայի երկայնքին, Մաշտոցի անուան մատենադարանին դիմաց եւ այլուր, ուր մասնակից բազմութիւնները կը ժամանէին, լսելու ընդդիմախօս դեկավարներու բոցաշունչ ելոյթները, ոգետորոյ խօսքերը, զգայացունց ճառերը, խանդավառող յայտարարութիւնները:

Պահանջքներ, լոզունգներ, առաջադրանքներ, ծրագիրներ, նոյնիսկ սպառնալիքներ, սաստեր, վերջնագիրեր, զգուշացումներ, որոնք, առաջինի պարագային կ'ուղղուէին ներկայ բազմութեան, երկրորդ պարագային՝ իշխանութիւններուն, իսկ ատոնք, իրօք, վստահութիւն կը ներշնչէին ժողովուրդին, քանի խոր համոզում կար, որ փոփոխութիւնները «դրան ետին» են, իսկ այդ բոլորը իշխանութիւնը ծունկի պիտի բերէր:

Հանրահաւաքները վերջ կը գտնէին նոր հանդիպումի մը խոստումով, որ տեղի կ'ունենար որոշուած թուականի մը, դարձեալ (յետաձգուած) ուրիշ թուականի մը յայտարարութեամբ, եւ այսպէս՝ շարունակաբար, մինչեւ որ ժողովուրդը հետզհետէ զգաց, թէ «բան մը» սխալ կ'ընթանայ, տեղ մը «թերացում» կայ, մանաւանդ երբ ընդդիմախօս «լիտր»ները եւս սկսան անհետանալ, ուրիշներ՝ հրաժարեցան, ոմանք ալ՝ անջատուեցան:

Հարցը հոս այն էր, որ ժողովուրդն էր միամիտ, թէ՞ ընդդիմախօսը, առաջինը հրապարակ կը վազէր «պտուղ» մը քաղելու անյազ ակնկալութեամբ, երկրորդը հրապարակ կը բերէր ամբոխը անոր ներկայութենէն «օգտուելու»:

Այսօր, Հայաստանի մէջ զանգուածային ընդդիմութեան մասին խօսիլը, իր մեծաշոինդ հասկացողութեամբ ու մասնակցութեամբ, ուղղակի անհեթեթութիւն է, որովհետեւ՝ չկայ անիկա, եթէ նոյնիսկ կայ, վտիտ է ու չի կրնար ազդեցիկ դառնալ, ժողովուրդը ապրելով անոր դառնութիւնն ու յուսախաբութիւնը, տեսնելով առաջնորդ ընդդիմախօսներուն մեծ մասին անճարակութիւնը եւ փուչիկային ամբոխավարութիւնը:





Ընդդիմադիր չորս կուսակցութիւնները՝ Հայ Ազգային Քոնկրէս, Բարգաւաճ Հայաստան, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, Ժառանգութիւն (վերջերս ալ՝ Օրինաց Երկիր), որոնք կը յուսակնին իրենց կոչումին հարազատ կրողը դառնալ, իշխանափոխական, բարեկարգչական, պահանջատիրական հիմնահարցերով, արդէօք ո՞րքանով կրնան յաջողիլ իրենց դիտաւորութիւններուն կամ հետապնդումներուն մէջ:

Նախագահական նախկին թեկնածու ու Ժառանգութիւն կուսակցութեան նախագահ Ռաֆֆի Յովհաննէսեան, որ կարծր (՞) դիմադրութիւն ցոյց տուաւ գործող նախագահին դէմ, նոր յոյսի նշոյլ մը բացայայտելով, շուտով թուցաւ, թէ՛ վերջերս նորէն սկսաւ խօսիլ «պայքարի նոր շրջան»ի մը մասին, սակայն, հարց է, թէ ասիկա ի՞նչ ժողովրդականութեան կրնայ արժանանալ եւ ի՞նչ յաջողութիւն կրնայ արձանագրել, բազմիցս հիասթափուած եւ յուսաբեկուած ժողովուրդին կողմէ:

Միւս կուսակցութիւնները եւս, ժողովրդային ու հանրահաւաքային առումներով, չեն կրնար զօրաւոր բարենիշներ արձանագրել, որուն պերճախօս փաստը, 1 Մարտի տխուր դէպքերուն առիթով, զոհուածներու յիշատակին արարողութիւնն էր, համեմատաբար, խիստ սակաւաթիւ մասնակիցներով:

(Ի դէպ, այդ ցաւալի ողբերգութեան մեղաւորներն իսկ չբացայայտուեցան կամ պատժուեցան, մինչ Պրն. Ռոպերթ Քոչարեան վազր... կորսայ եւ ներկայ իշխանաւորները... կը քննադատէ:

Ասիկա մեզի յիշեցնել կու տայ ուրիշ ազգային-պետական գերողբերգութիւն մը, 27 Հոկտեմբեր 1999-ի խորհրդարանական սպանողը, որուն ԲՈՒՆ չարագործ-հեղինակները ազատ-անկախ կը դեգերին...):

Ինչո՞ւ այս բարձրաձայն մտորումը:

Եթէ գործող իշխանութիւնները քննադատելի են, հետեւաբար, ոմանց համար՝ փոփոխելի, ապա, ի՞նչ պիտի ըսել ընդդիմութեան եւ ընդդիմախօսներուն մասին, որոնք ոչ միայն ձախողեցան ու ձախողուցին բարեշրջումներու հաւանականութիւնները, այլեւ շահագործեցին ժողովուրդին բարեմտութիւնն ու համբերութիւնը, զայն մղելով իրմէ հեռանալու, հիմնովին թերահաւատ ըլլալու:

Արտագաղթի՞ մասին կը խօսուի, բայց, ո՞վ ըսաւ թէ ատոր միակ պատճառը իշխանութիւնն է: Երէկուան եւ այսօրուան ընդդիմութիւնն ու ընդդիմախօսները դէր չունի՞ն ատոր մէջ, ժողովուրդը հրահրելով, ժողովուրդին անունով խօսելու ու ժողովուրդով երդուելու, նոյնհետայն, առնուազն, զայն ձգելով իր անտէր բախտին ու ճակատագրին, որովհետեւ անկազմակերպ, աններդաշնակ եւ անհեռանկար գործելաոճ մը որդեգրած էին:

Հետաքրքրական է (արդէօք է), ո՞վ՝ զո՞վ պիտի զգաստացնէ, ո՞վ՝ որմո՞վ պիտի զգաստանայ, երբ հայրենի ժողովուրդն է որ «զնդակ»ի դերի մը մէջ կը գտնուի, մերթ վերնախաւին, մերթ դիմադրական խաւին կողմէ:

## ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՏԱՆԴ Է – 13 –

### Եզրակացութիւն

Կասկած չկայ մեր մտքին մէջ, որ կրօնական տեսակետով, ազգովին կը գտնուինք ահաւոր հոգեւոր փլուզումներու առջեւ որոնք կը յուզեն եւ կը փոթորկեն մեր հասարակական կեանքը ամենուրեք ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:



Մեզի համար անհրաժեշտը ո՛չ թէ ծեսերու շոշոկանքն է եւ ո՛չ ալ դաւանաբանական խնդիրներու ձեքձեքումները, այլ մեզի պէտք են տաճառներ, անոնց կամարներուն տակ երգելու մեր հոգիէն դուրս ժայթքող յորդարատ ապրումները: Որովհետեւ տաճառներէ եւ սրբավայրերէ գուրկ ամբոխները, խօսուն կենդանիներու

խմբաւորումներ կրնան ըլլալ միայն, սակայն ո՛չ բարոյապէս եւ հոգեպէս բարձր իմացականութեան անձնաւորութիւններ:

Ինչպէս քրիստոնէական եկեղեցին, նոյնպէս ալ Հայց. Եկեղեցին ուրացած է Աւետարանի սիրոյ ներշնչումները եւ յամառօրէն կը շարունակէ եւ կը փորձէ վերապրեցնել բիրտ ոյժը եւ դրամը, իր առաքելութեան կեանքի բոլոր բնագաւառներուն մէջ:

Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտութիւն կը դառնայ կրօնքի եւ եկեղեցւոյ պէտքը: Մարդկային տառապանքները, գործուած եւ գործուող համաշխարհային անիրաւութիւններն ու աւերները, ահաւոր պատերազմներն ու թափուած արիւնները, ընկերային աններդաշնակութիւններն ու անարդարութիւնները, ընտանեկան քայքայումները, բոլորն ալ արդիւնք են բարիի, գեղեցիկի ուրացումին եւ բարոյական պարտականութեանց թերացումին եւ մոռացումին:

Անհրաժեշտ է որ մարդկային հոգիին մէկ անկիւնը յատկացուի հոգեկան եւ բարոյական արժեքներու: Եկեղեցին, անկախ իր դաւանական հարցերէն ու ծեսերէն, պէտք է օժտուած ըլլայ այնպիսի եկեղեցականներով՝ որոնք օժտուած ըլլան հոգեւոր պատրաստութեամբ ժողովուրդին հետ խօսելու եւ անոր մէջ արթնցնելու իր թմրած եւ երբեմն ալ ամբողջովին քնացած հոգեւոր ընդունակութիւններն ու ազդակները:

Եւ մանաւանդ այս քսանմէկերորդ դարու մարտահրաւերներուն դիմաց, մեր ստորնացնող եւ սողացող կեանքը պէտք ունի մաքուր իտեալի, լուսաւոր մտատիպարներու, որոնք կարենան խանդավառել մեր հոգեկան խոյանքները: Դժբախտաբար պէտք է խոստովանիլ որ հոգեկան



եւ բարոյական այս քայքայումին մէջ եկեղեցին ունեցած է եւ ունի իր պատասխանատուութեան առիծի բաժինը:

Քրիստոնէական Եկեղեցին իր կոչումին եւ մարդկային յառաջդիմութեան հակառակ ուղղութիւն մը որդեգրեց եւ իր ստեղծած դատապարտելի ընթացքով, ազատ խորհողներու մտքին մէջ ստեղծեց կրօնքի հանդէպ անտարբերութիւն եւ երբեմն ալ զգուանք: Եւ այս բոլորը հաւանաբար տեղի չունենային, եթէ եկեղեցին կարենար ինքզինք յարմարցնել մարդային մտածումին եւ ըմբռնողութեան, այլ խօսքով քայլ պահէր իր ժողովուրդի կարիքներուն հետ:

Հայ ժողովուրդին համար Քրիստոնէութիւնը կենսական արժէք ունի, որովհետեւ անոր մէջ գտած է իր մտքի, խղճի եւ հոգիի ազատութիւնը, ինչպէս նաեւ իր ազգային գոյութեան պահպանութիւնը:

Բոլորս ալ գիտենք որ Հայց. Եկեղեցին իբրեւ դարբնոց քրիստոնէական դաստիարակութեան, կերտած է հայուն հոգեւոր նկարագիրը եւ միանգամայն ազգային ինքնուրոյն գոյութիւնը զարգացնող հաստատութիւն մը եղած է, որ մեզի ստրվեցուց ազգասիրութիւն եւ հայրենասիրութիւն:

Բայց ինչ կը ներկայացնէ ան այսօր՝ իր աւերակեալ եւ խորտակեալ վիճակով, եւ ինչ պէտք է ընենք ազգովին զայն փրկելու համար բռնակալ կղերապետութեան ժանիքներէն: Կղերապետութիւն մը որ կ'անտեսէ ամէն ձեւի կարգ ու կանոն, կանոնագրութիւն եւ սահմանադրութիւն եւ իր անտառային օրէնքներու սկզբունքով կը խորտակէ եւ կը տապալէ մարդկային բարոյական սկզբունքներու բոլոր չափանիշները:

Ամէն կազմակերպութիւն, ըլլայ կրօնական, քաղաքական թէ ընկերային անպայման ենթակայ եղած է շարունակական փոփոխութեան: Բոլոր անոնք որոնք անընդունակ եղած են եւ կամ չեն կամեցած գոհացում տալ ժամանակի պահանջներուն, բնականաբար ենթարկուած են ուժացումի եւ աւերման: Դժբախտաբար այդպիսին է այսօր Հայց. Եկեղեցին:

Հայց. Եկեղեցին որպէս դարաւոր կազմակերպեալ հաստատութիւն, իր բոլոր հոգեկան եւ մարդկային արժէքներով, կը ներկայացնէ լիակատար ամբողջութիւն մը, ամբողջ մարմին մը, որուն գլուխն է նոյն ինքն Քրիստոս ինչպէս Պօղոս Առաքեալ կը յայտարարէ: Սակայն եւ այնպէս, այսօր այդ մարմնին մէջ կան բոյն դրած հիւանդութիւններ (Փառամոլութիւն, դրամասիրութիւն, ազահութիւն, վրէժխնդրութիւն, անբարոյութիւն, անբարտաւանութիւն, անբարեխղճութիւն, անօրէնութիւն եւ մասամբ նոցին) որոնց պատճառաւ վտանգուած է Եկեղեցւոյ ամբողջական մարմինը:

Կրնա՞յ ըլլալ որ քսանմէկերորդ դարու համշխարհային շփոթին մէջ, Հայ ժողովուրդը դադրած է հաւատալ եկեղեցւոյ դերին: Եթէ ա՛յս է այսօրուայ տխուր պատկերը, հետեւաբար աւելորդ է խօսիլ Հայց. Եկեղեցւոյ բարեկարգութեան մասին: Իսկ եթէ կը հաւատանք՝ այդ պարագային, նոր դարու նոր յոյսերով կրնանք բարեկարգել մեր եկեղեցին իր հոգեւորականութեամբ, միշտ հաւատարիմ մնալով եկեղեցւոյ նուիրագործեալ աւանդութիւններուն:



Աշխարհը շարժման եւ զարգացման մէջ է, յարատեւ բարեշրջման եւ յեղաշրջման մէջ, հետեւաբար մենք ինչպէ՞ս կրնանք խափանել այդ զարգացումը մեր կեանքի մէջ, որուն բացակայութիւնը կրնայ առաջնորդել մեզ ապականութեան եւ ի վերջոյ անդամալուծութեան:

Զարգացման տեւական աշխատանք կը նշանակէ, եկեղեցին բարեկարգել իր հիմնական բոլոր սկզբունքներուն մէջ: Չմտածենք երբեք՝ որ եկեղեցին բարեկարգելով կրնանք զայն այլափոխել, ընհակառակը, անոր տեւական զարգացումը պիտի արտայայտէ անոր կենդանութեան առողջ վիճակը, ինչ որ բացակայ է այսօր:

Բոլոր դարերու ընթացքին, եկեղեցւոյ կեանքէն ներս, ժողովուրդը իր հոգեւոր, բարոյական եւ ազգային պետքերը զգալի դարձուցած է եւ իր հաւատքի եւ գիտութեան զօրութեամբ բանաձեւած է քրիստոնէութեան հիմնական կէտերն ու սկզբունքները: Ինչո՞ւ սակայն ամուլ է ան այսօր, երբ մարտահրաւերները անհամար են եւ աւելի բարդ:

Եթէ չկարենանք ճանչնալ եւ գնահատել մեր նախորդներուն կատարած հոգեմտաւոր Աստուածահաճոյ աշխատանքը որպէս արտայայտութիւն իրենց հաւատքի խոր գիտակցութեան, կարելի պիտի չըլլայ բան մը փոխել որ պիտի ծառայէ եկեղեցւոյ կենդանութեան եւ պայծառութեան, որուն արտացոլացումը պիտի տեսնենք ժողովուրդի կեանքին մէջ:

Հետեւաբար՝ պարտաւոր ենք ազգովին, մեր նախորդներու նուիրականութեանց նախանձախնդրութեամբ ձեռնարկել բարեկարգութեան լուրջ աշխատանքին, լուսաւորեալ մտքով եւ աղօթքի զօրութեամբ: Բարեկարգութեան այս սրբազան գործին պէտք է նուիրուին եկեղեցականներ եւ աշխարհականներ, անոնք՝ որոնք ունին գիտութիւնը եւ պատրաստ են հասկնալու իրենց պատասխանատուութեան լրջութիւնն ու ծանրութիւնը եւ զայն կատարեն հաւատքով եւ սիրով:

Ահաւասիկ այ՛ս նուիրական աշխատանքէն ետք, Հայց. Եկեղեցին դարձեալ պիտի ստանայ իր աւանդական հրապոյրը եւ իր շինարար ազդեցութիւնը պիտի ունենայ, ինչպէս անցեալին, նոյնպէս եւ այսօր մեր ազգային կեանքի վերաշինութեան մէջ, նամանաւանդ նորաստեղծ Հայրենիքին ներս, ուր եօթանասուն երկար տարիներ, համայնավարական վարչակարգին երկաթեայ բազուկին տակ տառապեցաւ մեր ազնիւ ժողովուրդը որ նոյն ինքն եկեղեցին է:

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

10 Յուլիս 2014



## ԽՈՂԻ ԱՎՆԹԱՐԹՆԵՐ

ՄՐՏԻ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ զգալ՝ բացուող արշալոյսին, գարնան զարթօնքին, ծիլ ու ծաղկի փթթումին, մանկան ժպիտին, երկնքի անսահմանութեան, ամպերու խաղին... Այս բոլորը տրուած են բոլոր մարդոց հաւասարապէս, անխտիր, ի վայելումն աչաց եւ հոգւոց: Փո՞քր ուրախութիւն կը պարգեւեն միթէ՛ բնութեան, կեանքի այս տարրերը, զորս չենք ալ նկատեր շատ անգամ՝ կլանուած ըլլալով առօրեայ վագր ու հեւքով, «մեծ» ուրախութիւն գտնելու խաբեպատիր մարմաջով, անդուլ եւ յոգնատանջ փնտռտուքով...: Բայց բուն ուրախութիւնը, ոգեկան ուրախութիւնը՝ այս հաղորդակցութեան մէջ չէ՞ արդեօք, բնութեան եւ կեանքի փոքրիկ եւ աննշան թուացող, խորքին մէջ հրաշք-երեւոյթներուն հետ....

.....



Ի՛նչ տարիքի մէջ ալ ըլլանք, մեր մէջ կարծէք ԵՐԱԽԱՅ մը կայ թաքնուած, որ մերթ կ'ուրախանայ ամենէն փոքր բաներով, կը թովոյայ, կը խանդավառուի, կը ծիծաղի լիաթոք... մերթ՝ կը տրտմի լալու չափ, կը զայրանայ, կը պոռթկայ.... մերթ ալ կը հիանայ, կը զարմանայ, կը սքանչանայ աշխարհի բաներով, երեւոյթներով, կարծէք առաջին անգամն է որ կը տեսնէ զանոնք...: Երախայ՝ որ

միամիտ ալ է, դիւրահաւատ, անմեղունակ, օդին մէջ երագներ հիւտող.... Ո՛հ, ի՛նչ լաւ է որ հասուն տարիքին ալ, կը մնանք քիչ մը երախայ, եւ ամէն Աստուծոյ օր, մեզի այնպէս կը թուի, որ դեռ նոր պիտի սկսինք ապրիլ, որ կեանքը դեռ փռուած է մեր առջեւ՝ իր վարդագոյն երանգներով ու երագներով....

.....

Կեանքի իւրաքանչիւր ակնթարթ անկրկնելի է, եւ թերեւս ա՛յդ է անոր բուն արժէքը.... Պիտի ուզէի՞նք վերապրիլ նոյնութեամբ մեր կեանքի անցեալ մէկ ակնթարթը, հոգ չէ թէ որքա՛ն ցնծագին ու երանաւետ եղած ըլլար ան.... Մարդ էակը ընդհանրապէս կրկնութիւն չի սիրեր.... այլազանութիւնը եւ փոփոխութիւնը կը թուին ըլլալ կեանքի հմայքին էական բաղադրիչները....

.....

Ամէն մարդ նոր աշխարհ մըն է, որուն հետ հաղորդակցութիւնը կը հարստացնէ ներաշխարհը, նոր գաղափարներ եւ նոր մտածողութիւն կը խթանէ.... սեփական մտքի ճահիճէն կ'ազատագրէ քեզ, քանզի մարդ էակին կեանքը, ըստ իս, գաղափարներու եւ զգացում-յոյզերու յարատեւ ՇԱՐԺՈՒՄ է էապէս.... այլապէս, ան պիտի բանտուած մնար իր ԵՍ-ի նեղ սահմաններուն մէջ եւ պիտի աղքատանար ու լճանար, եթէ անձամբ, կամ մեծ գրողներու երկերը կարդալով՝ հաղորդակցութեան մէջ չմտնէր այլ մտածողներու հետ....

.....



ԵՍ-ի նեղ պատեանը, ԵՍ-ի ստրկացնող կիրքերը, ԵՍ-ի գոռոզամտութիւնը կամ մեծամտութիւնը, ԵՍ-ի սխալ հասկցուած արժանապատուութիւնը, ԵՍ-ի նախանձը.....Ասոնք չէ՞ն այն պատնէշն ու պատուարը, որոնք կ'արգիլեն որ ԵՍ-ը կարենայ ՄԵՆՔ դառնալ, որ ԵՍ-ը ձուլուի ՄԵՆՔ-ի մէջ, որ կարենանք յաղթել ԵՍ-ի նեղ ցանկութիւններուն, նեղմտութեան....., որ կարենանք համայնանալ, ընդարձակուիլ, տարածուիլ, հարստանալ....ԵՍ-ը մեր բուն ԵՍ-ին մեծագոյն թշնամին է....

.....

Եթէ անազատութեան մէջ չես եղած, կրնա՞ս լիարժէք գնահատել ազատութիւնը....Եթէ մուրթ չես ապրած, կրնա՞ս զգալ լոյսին բերկրանքը....Եւ այսպէս, ամէն ինչ իր հակասական յատկանիշով կ'արժեւորուի, իր բուն իմաստը կը զգենու...: Նոյնն է բարիի եւ չարի պարագան, որոնք ի դէպ միասին կ'ապրին նոյն էակին մէջ միաձոյլ....եւ միշտ ալ կեանքի մէջ կը յայտնուին սահմանագիծեր, ուր մէկ քայլ ասդին՝ ԲԱՐԻՆ կը յաղթանակէ, իսկ մէկ քայլ անդին՝ ՉԱՐԸ....Փորձութեան ահեղ պահեր կան մանաւանդ, երբ դուն քու մէջը կը զգաս այդ պայքարը՝ Բարիին եւ Չարին միջեւ...: ԲԱՐԻՆ լուսաւոր է, ազնիւ, վեհ ու լայնախոհ, գիտէ ան բարձրանալ ճղճիմ պարագաներէն վեր, տեսնել ԱՄԲՈՂՁԸ՝ եւ-ի անցողիկ ցանկութեանց փոքրոգութենէն, տկարութենէն, խոյանալ, աշտարակուիլ....Մինչդեռ ՉԱՐԸ կ'ըլլայ շնչահեղձ ոխի, ատելութեան, նախանձի, նեղմտութեան թոյնով եւ մարդը կը տանի ինքնառնչազգացման .....ԲԱՐԻՆ էապէս ԵՍ-ի ընդարձակումն է ժամանակի եւ միջոցի նեղ սահմաններէն....Մարդուն Աստուածայնացումը ...

.....

ԲԱՐԻ արարքը կը բխի սրտէն՝ անհաշիւ եւ ինքնեկ, ինչպէս բոյրն ու թոյրը ծաղկանց, ինչպէս պտուղը ծառին, մեղրը մեղուին... չակնկալեր ան որեւէ փոխհատուցում, եւ անոր մէջ է անոր բուն արժէքը....Մնացեալը առեւտուր է եւ փոխադարձ շահի գործարք....

.....

ՀՈԳԻԻ, ՈԳԻԻ ԱԶԱՏՈՒԹԻԻՆ....Ոչ մէկ բնութիւն կրնայ սպառնալ հոգիի եւ ոգիի ազատութեան, որքան ալ դաժան ըլլայ ան, եթէ մարդը թէ ազգը կրողը ըլլայ հոգիի եւ ոգիի ազատութեան....Ամէնէն դժիւստ պայմաններու մէջ ալ՝ աքսորի եւ բանտի գոյններուն մէջ, վսեմ հոգիներ կան, որոնք վառ պահած են իրենց այդ ազատութիւնը...: Կայ նաեւ հակառակ պատկերը: Ազատ ու ամէնէն բարեկեցիկ պայմաններու տակ, կան մարդիկ, որոնք կ'ապրին ստրկամտօրէն, զուրկ՝ հոգիի եւ ոգիի ազատութենէն....զլուխ կը ծռեն անոնք երեւոյթ թէ աներեւոյթ բնութեանց, համակերպողականութեամբ մը, որ համագոր է նուաստ եւ պատուազուրկ կեանքի....իրենց ազատ խիղճը կը ծախեն դիրքութեամբ յանուն երեսուն արծաթի, դիրքի ու պաշտօնի....ազատ ոգիի խոյանքը կ'արգելակեն, հաճոյ թուալու համար ա՛յս կամ ա՛յն բռնակալին, ի խնդիր բեկոր մը հանգիստ կամ բարօր կեանքի, կոխկոտելով իրենց արժանապատուութիւնը, պատիւն ու ճշմարիտ ազատութիւնը.....Իրաւ ազատութիւնը մեծութեան յատկանիշ է:

.....



ԿԵԱՆՔԻ ԴԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ մեր լաւագոյն ուսուցիչներն են...անոնք են որ մեզի կը սորվեցնեն կամքի տոկունութիւն, պայքարի ոգի հանդէս բերել, հնրամտութիւն ի գործ դնել, կարեւորը տարանջատել անկարեւորէն, առաջնայինը՝ երկրորդականէն, կը կոփեն, կը թրծեն մեր ներքին ոյժը...տակաւին կը մարդկայնացնեն մեզ, ուրիշին դժուարութիւնն ու ցաւը զգալու զգայնութիւնը կը փոխանցեն...: Կենսափորձի մեծ դպրոց են անոնք: Հեզասահ, առանց որեւէ դժուարութեան կեանք մը ապրիլ՝ էապէս չապրիլ կը նշանակէ...: Դժուարութիւններ յաղթահարելով՝ կը հասունանանք, կ'իմաստնանանք, կ'ուժեղանանք, կը մարդկայնանանք...ԿԵԱՆՔԸ, խորքին մէջ, դժուարութեանց շղթայ մըն է, զոր պիտի յաղթահարենք շարունակ....

.....

Ի՛նչ որ ՓԱՅԼ ունի, ոսկի չէ դեռ, ի՛նչ որ հաճոյք կու տայ ուրախութիւն չէ դեռ, ի՛նչ որ խելացութիւն կը թուի ըլլալ իմաստութիւն չէ դեռ...Հոգիի եւ մտքի գանձերը մասնաւորապէս երբեք պատրաստի չեն մատուցուիր կեանքի մէջ... պիտի պեղել շարունակ, խորաչափել ու խորաքննել զանոնք, կեանքի փորձի ենթարկել զանոնք եւ մանաւանդ չտարուիլ երբեք այլոց գոված, գովաբանած «արժէք»ներու հմայքէն, որ շատ անգամ կ'ըլլայ խաբեպատիր, սուտ ոսկիի փայլին նման...: Մեզմէ իւրաքանչիւրը ի՛նչ պիտի որոնէ ու գտնէ՝ իր սրտին ճշմարիտ ուրախութիւն տուող գանձերը..., ինչպէս նաեւ ի՛նչ պիտի փնտռէ ճշմարիտը՝ թուացեալ ճշմարտանման, բայց էապէս շպարուած սուտերուն մէջէն...Պատրաստի հրամցուածը արդէն կրնա՞յ էապէս երջանկացնել մեզ, եթէ չէ անցած ան մեր կենսափորձի տառապանքին ընդմէջէն....

.....

Առաւօտեան մարզանքը՝ քալելով թէ այլապէս, վստահաբար կ'աշխուժացնէ եւ կը զօրացնէ մկանները...Բայց նոյնը չէ՞ պարագան ՄՏՔԻ ՄԱՐԶԱՆՔԻՆ, որուն էապէս կարիքը ունինք բոլորս ալ, մանաւանդ մեքենայացած այս աշխարհին մէջ ուր կ'ապրինք, եւ շուկայիկ կամ այլ քարոզչութեան մատուցածը կ'ընդունինք յաճախ, առանց հարցադրելու թէ որքան ճիշդ կրնայ ըլլալ ա՛յդ...: Նոյնն է պարագան զանազան, զարմանազան գաղափարներուն, որոնք բարձրադասակ կը քարոզուին եւ կը միտին լուսալու մեր ուղեղները, տեսակ մը ռոպորթացնելու մեզ...Մատուցուած այդ գաղափարները միշտ ալ հարցադրուելու, քննարկուելու, մտածուելու պէտք ունին որոշապէս, նաեւ՝ կենսափորձի բովէն անցնելու...Պատրաստի մատուցուած որեւէ գաղափար մեքենայաբար իւրացնելը ՄՏԱԾՈՒՄԻ ԾՈՒԼՈՒԹԻՒՆ է վստահաբար, որ անշարժութեան կը մատնէ մեր միտքը եւ ստրկամտութեան ազդակ է անհատին թէ ընկերութեան համար....

.....

ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ...Ի՛նչ թոհուրոհերէ, խորխորատներէ, կենաց-մահու պայքարներէ անցած է ան, նոյնիսկ՝ Յեղասպանութեան եւ Հայրենահանումի գեհեներէն, սակայն դեռ վառ կ'ապրի ան՝ ամէն մէկ ՀԱՅՈՒ մէջ...կը լուսաւորէ անոր ճամբան, կը յուսադրէ զայն անոր տազնապալի պահերուն, կը շողշողայ արեգնափայլ՝ հայոց լեզուի մէն մի վանկին մէջ, հայ երգ ու տաղի, հայ բառ ու բանի մէն մի հնչիւնին մէջ...սնունդ կու տայ հայ մարդու խոհ-



ապրումներուն, կենսայորդ աւիշ՝ անոր ճիգերուն եւ չի լքեր զայն անոր կեանքի ամենէն դժիւմ պայմաններուն մէջ անգամ....Ան իր լոյսը կ'առնէ Արագածի կատարին վրայ պլպլացող Լուսաւորչեան կանթեղէն հայութեան....ՀԱՅՈՒ ՀՈԳԻՆ.... ցեխն անգամ զայն աղտոտել չի կրնար...ինչպէս կ'ըսէ քանաստեղծը....

.....

Հայրենիքը աւելին է քան աշխարհագրական տարածքը, աւելին է քան նիւթեղէն հողը, աւելին է քան բնակավայրը.....: Անիկա ոգեղէն խորհուրդ ունի իր մէջ, մասնիկ մը՝ մեր նախահայրերու արիւնէն ու արցունքէն, սրբազան աճիւնէն..., մասնիկ մը՝ ոգեկան հրայրքի ծնունդ՝ մեր նիւթեղէն եւ հոգեմտաւոր գանձերէն....դարերու ստեղծագործական ցաւատանջ երկունքէն.... մասնիկ մը՝ մեր դարաւոր անանդութիւններէն, առաքինութիւններէն...Կրողն է ան մեր պատմութեան շունչին, դարերու հեւքին, հազարամեակներու տառապանքին, մաքառումներուն, խոյանքներուն, երազին ու տեսլականին...ՀԱՅՐԵՆԻՔԸ ապրող խորհրդանիշ է, սրբազան մասունք, յոյսերով եւ լոյսերով օծուած ոգեղէն տարածք, արեան կանչ....Այս բոլորն է ան եւ դեռ շատ աւելին....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՄԱՅԻՄ-ՅՈՒՆԻՄ-ՅՈՒԼԻՍ 2014